

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է


Վերջին պատերազմի և ժամանակակից մեկ է առերկրային պայքարի և ծանրագրեցիկ կերպով - գոյութիւնը այս իրաւունքին, որ դարերէ ի վեր աւատականութեան անխիղճ և բռնաբարիչ ոտքերուն տակ մնացած էր ճնշեալ ու ապիկար :

E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHAEOLOGIE LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏ: ՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ուղղի դասեր:	60
Վեցամսական:	35
ՕՏՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան:	20
Վեցամսական:	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՒԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔՐԸ ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Կ:

ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՂՈՒՄԱԾ ԳՐՈՒՄԻՆՔ ԵՍ Զ'ԵՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՆԻՒԿ ՎԵՐԱԲԵՐԻ ԵՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Բ.

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ

Մեր ժամանակակից մեկ է առերկրային պայքարի և ծանրագրեցիկ կերպով - գոյութիւնը այս իրաւունքին, որ դարերէ ի վեր աւատականութեան անխիղճ և բռնաբարիչ ոտքերուն տակ մնացած էր ճնշեալ ու ապիկար :

Տանհուկերը դարուն ֆրանսացի տնտեսագէտներն ու խորհուրդները լաւ ներշնչուած էին, երբ կը խրատէին միապետականներուն - որոնք աւելի բռնապետականներուն կամայականութիւնը ունէին - մի քիչ բարեացակամ ըլլալ հանդէպ խոչանդեալ ժողովուրդի և չ'յանալ թուժեր կանգնելու յառաջիկայութեան առջև որ հրահայտեալ կը յառաջանար՝ հաւասարութեան և ինքնաճանաչութեան լուսաշագող զոհերով շրջապատեալ :

Այն ամբողջները այն արգելքները որոյցում կը խնդրէր անոր ճամբուն, կը դռնէին միաբերան այն ժողովուրդասէր և միանգամայն լրջաբան գործիչներ, այնքան ազէտալի պիտի ըլլան ձեզի համար, որքան զանոնք կործանելու դժուարութիւնը մեծ և բաղախնեղ ահարկու պիտի ըլլան՝ բայց մտիկ ընող չ'եղաւ, և՛ ընդհակառակն՝ հարստահարութիւններ, կեղեքումներ բաղմապատկուեցան. ժողովուրդն աւելի արհամարհուեցաւ, կոխտուեցաւ :

Եւ ահա՛ իբրև մրկայոյց ովկէան՝ նա խուժեց, սրացաւ. ի սպառ սպիւռ քանդեց բերդերը, ամրոցները. արքայական գահը հիմն ի վեր տապալեց. արքայ, արքայազուն, թագուհի, աւագանի, բերաւոր աղնուականներ անխնայ խողխողեց, և՛ արիւնշաղխ սուր ի ձեռին կանգնելով դիականց և աւերակաց կոտորու վրայ, խրախտալի գոչեց ապշած եւրոպիոյ և սարափահար թագակիրներուն :

« Ես մեռած չ'եմ և գիտեմ պաշտպանել իմ իրաւունքս »

Արդարև ժողովուրդը մեռած չ'է : և միշտ՝ երբ որ ուզէ՝ գիտէ և կրնայ պաշտպանել իր իրաւունքը :

Դեռ երեկուան եղելութիւնները չը մոռցուեցան : Ի՞նչ էր Կ. Պոլսոյ խռովութեանց, գաւառներու արիւնահեղութեանց և այնքան ազգակցաց ցերուցան ըլլալուն սկզբնապատճառը : Ո՛չ ապաքէն բողոքը

ժողովուրդեան մը, որ սթափելով իր դաւաճութիւններէն, կ'ուզէ պաշտպանել իր իրաւունքը և ալ կը մերժէ ստրկական կենցաղ մը :

Ի՞նչ էր շարժառիթը Տրէֆիւսեան ինքրոյն, որ ֆրանսան ալեկոծեց և աւժամապէս անկարողութեան դատապարտեց զայն քաղաքական աշխարհի մէջ :

Պատճառ. — Վասն զի ժողովուրդը հոտն առաւ իրագործուած անիրաւութեան մը և ուզեց անմեղ մը պաշտպանել :

Անշուշտ ըսել չ'ենք ուզեր թէ ժողովուրդը միշտ անաչառ գտնուած է. երբէք սխալած չ'է. երբէք անմեղը յանցապարտին հետ շփոթած կամ անգուժ եղած չ'է : Հեռու մեզմէ այսպիսի մտածում մը, որ կեղծաւորութիւն և շողմարարութիւն կը բուրդէ : Անաչառութիւն, անսխալակամութիւն, արդարագատութիւն և որդմածութիւն Աստուծոյ անբաժան յատկութիւններն են : Արարածները ուրիշ աշխիշ կրնան ընկալ, բայց միայն բարեացակամ՝ եթէ ուզեն :

Եւ ո՛չ ալ ըսել կ'ուզենք թէ իր իրաւանց տիրանալու և զանոնք յարգել տալու համար ժողովուրդը չ'ունէր ուրիշ միջոց բայց միայն կործանել, աւերել, խողխողել : Այո՛, այդ արհամարհուած, շատ անգամ կոխտուած և միշտ անարդուած տարրը կրնար և կրնայ աւելի վսեմօրէն, աւելի մարդկօրէն լուծել իր վրէժը :

Նա կրնայ իր միաբանութեամբ և համերաշխային ոգւով զինուած՝ իր բարոյական մտաւորական կարողութիւնները չափազանցել, և՛ այս կերպով՝ իր հեղուկութեան և մշակուած գլխուն առջեւ խոնարհելու հարկադրել զինք աւելի ճշմելու համար դէպի վար հակած այն ամբարտաւան ճակատները :

Հոս աւելի պիտի շեշտուէր ընկերակցութեան և խաղաղասիրութեան յայտն յաղթական ուժը :

Բայց և այնպէս ժողովուրդը կրնայ՝ յաշտ աշխարհի՛ դիւրութեամբ մեղմացնել իր արարքը, ըսելով իր քաղաքական, կրօնային և ընկերական վարիչներուն :

— Եթէ աչառութիւն ըրինք, ձեր ընչաքաղցութիւնն օրինակ բռնեցինք. եթէ շատ անգամ սխալեցանք, ձեր հարթած ուղիէն քալեցինք. եթէ անմեղը դատապարտեցինք, ձեր օրինակին հետեւեցանք. եթէ անգուժ եղանք, ձեր սիրտը կեղծեցինք : Վերջապէս ինչ որ ըրինք, ձեր արարքին վրայ կաղապարեցինք : Աղաչեցինք, աղերսեցինք, ազդարարեցինք, ո՛չ միայն

մտիկ չ'ըրիք, այլ և մեր ձայնը խեղդելու համար դուրսէն օգնութիւններ բերիք, զանոնք ալ ձեզի հետ անպատուելու համար : Ալ մեզի ուրիշ բան չ'մնար բայց միայն ըսել. « արիւն ձեր ի գլուխ ձեր » :

Ո՛չ, ժողովուրդը մեռած չ'է, թագաւորութիւնք կը կործանին, քաղաքներ կ'անհետանան, լեռներ կը դաշտանան, դաշտեր կը լեռնանան բայց ժողովուրդը չ'մեռնիր : Ժողովուրդն անմահ է, նա միշտ պիտի ապրի, ցորչափ երկրագունտս ապրի : Նա միշտ պիտի ապրի, և միշտ պիտի գիտնայ պաշտպանել իր իրաւունքը :

ՊԱՏԱՍԽԱՆ

ՕՏՏՈՒՐՄԱՆ ՄԵՆԱԿԵԱՅԻՆ

Նախքան անուպատին մէկ խորհն խորհակահար սրտէ մը արձակուած հառաչանք մը, բողոքի ձայն մը արձագանգ կը գտնէ դարձեալ « Նոր-Օր » ի մէջ :

Անապատի այդ մենակեացը խոռոպոյց եւ հրարորոք — անշուշտ սաստիկ սարերէն — ալ ու ձախ վճիռներ, հարուածներ կ'արձակէ : Կարծես նոր կամպէթթա մ'է, կամ նոյն ինքն վ. Հիւկօ՝ որ գերեզմանի հանգիստէն պահ մը հրաժարելով եկած է այդ ժողովուրդին հայրենասիրութեան, միութեան հրաւեր կարգաւ, « Միքիլի հայրենակիցներ », ճշմարիտ ազգասէրներն են : Եւ անտարբերներուն զէմ բարկաճայթ շանթեր կ'արձակէ : Մէկ խօսքով՝ այդ ժողովուրդը զգաստութեան կը յորդորէ այդ զգաստ պարոնը :

Ուսուցիկ ոճով այդ գրուածքը կարգացողներն պահ մը թերեւս կարծեցին թէ արդեօք նոր վտանգ մը կ'սպառնայ համայն հայութեան եւ կամ օգնութեան հրաւեր կը կարգայ հարկաբաւոր, հազարաւոր անաէր որբուկներուն համար որոնք այսօր նոթի, անուսող կը ստապին : Սակայն ատոնցմէ ոչ մին է որ առիթ տուած է իրեն գրիչ շարժելու :

Հայ ժողովուրդը եթէ այդ նախանձայնոյց պարոնին ջերմ կոչին եւ պոռոչին անսայ մեր մէջ մեծ յեղաշրջում մը տեղի պիտի ունենայ եղեր : Ուստի « Ի սէր խաչեցեալ հայրենիքին » ամենքն ալ միութեան կը հրաւիրէ, « եկէ՛ք միացէ՛ք մեզի, կ'ըսէ : ու միասիրտ եւ միահոգի աշխատինք ազգին վերակենդանութեան սուրբ գործին » : Եւ գիտէ՞ք ինչ է եղեր այդ ՍՈՒՐԲ ԿՈՐՄԸ. Նոր-Օր ի բաժանորդ գրուիլ . . . :

Արդարև ինքրոյ առարկայն որքան աննշան եւ անկարեւոր գրուածքն ալ նոյնքան ուսուցիկ եւ սնամէջ :

Շատ տեսակ ռեֆրաններ տեսած էինք, սակայն կը խոստովանինք թէ առիկայ իր տեսակին մէջ տարօրինակ նորութիւն մ'էր :

Յօդուածագիրը իբր բնաբան սա գաղղիբէն ինաստայից ասացուածքը դրած է ձառին ընկերքը. ա պօն անքանեօտ ապի՛ր :

Չեմ գիտեր թէ այս քանիբարորդ անգամն

է որ այդ ասացուածքը կրկնուած է իր յօդուածներուն մէջ եւ սակաւին պիտի գործածուի անշուշտ ցնոր անօրինութիւն : Յայտնի է թէ ինչ ըսել կուզէ այդ խօսքով . չ'ենք մեղադրելու պարտը ինքզինքին պէս պիտեմուկ կը կարծէ ընթերցող հասարակութիւնը :

Այդ տղայական ու ծիծաղելի յօդուածին կարեւորութիւն տալ չ'էր արժեք անշուշտ , եւ թէ հոն յաւակնոտ չեղտերով նախատահան բռնակը , վերապահելով ակնարկութիւններու ուղղուած չ'ըլլային այս կամ այն անձին դէմ : Արդ նախ հարցնենք իրեն . պարո՞ն , երբէ՞ն ի վեր է որ հրապարակի վրայ գրել շարժել սկսած էք որ այդպէս ծաղրելի յոխորտանքով ուրիշները չըլլան իրենց կը կոչէք : Ինչ շուտ մտոցաք որ դեռ անցեալ տարի ձեր ցափրտուկ գրութիւնները կրկին եւ կրկին սրբագրութենէ անցնելէ վերջը կը հրատարակուէին , այն ալ Փիւնիկի մէջ :

Եւ այժմ իսկ ո՞վ կրնայ մեզ վստահացնել թէ մատ չէ խաղացած ձեր այդ գրութեան մէջ անհամ ու անլի՛ Օմտուրմանի գրութիւն պէս :

Գուր ռեբիշներուն զգաստութիւն կը քարոզէք , մինչդեռ ձեր լիբր ու լիտի լեզուն ասնձի մը պէտք ունի : Երտուելակներ անոնք են , որ ռեբիշներուն թաղուն նպատակին կոչը գործիք կ'ըլլան : Պազիլ ի որդեգիրները անոնք են , որ բարեխիղճական եւ հանրային գործի մէջ իսկ իրենց շահուն եւ փառասիրութեանը յագուրդ տալ կ'ուզեն , եւ գիրքնք իրաւամբ քննադատողները անուանալիկ կը ջանան կեղտոտ բասերով եւ ձրի նախատինքնով . . . : ա պօն անքաննե՞տ ապի՛ն :

Գիտես որ այսօր ամբաստանուողներէն մին ալ դու ես՝ իբր անհոգ ու զանցառու : Եւ քանի որ պարտաւ ջուէ կ'առաջարկես իրաց այս վիճակին պատասխանատուներուն համար , գիտցի՛ր որ պարտաւանաց արժանի եղողներուն մին ալ դուն ես , որ պաշտօնիդ (Մայր-Դիւանի տեսնադարութիւն) կ'առաջանը մէջ դատապարտելի անհոգութիւն մը ցոյց տուած ես մինչեւ վերջին օրը , թիւրեւ մասնաւոր գիտուածով մը . ա նանկ որ այսօր Մայր-Դիւանի արձանագրութեան տեսրակին էջերը ձեռք ձերմակ կ'ընեն երեսիդ պէս : Հա՛ մտոցայ . տարուան մը պաշտօնավարութեանը միջոցին Մէկ հատ միայն նամակ գրած ես , անոր ալ ֆօրթան անել զանց ըրեր ես : Շիտակը , ի՞նչ ատան ազգասիրութիւն , ի՞նչ անձնուէր աշխատակցութիւն :

Եւ տակաւին երբ ռեբիշներուն պարտաւանալութիւն , աշխատակցութիւն կը քարոզես նման կոչրի մը որ գոյներու վրայ ճառել կը ձգտի : Պատուական վայել կը կարգաս ամին անոնց որոնք այլ եւ այլ պատրուակներով հանրային գործերէ հեռի կը կենան :

Ինչպէ՞ս կուզես որ մասնակցին գործի մը որուն մէջ կը գտնուին թղթի պէս զգաս , պարսանանայ ընկերներ , Մարաշի խեղճներ (ձեր իսկ որակած քաներով) խել մը ապիկար ողջաներ եւ վերջապէս սեւ սիրտ Ռոսէններ . . . :

Ա՛ պօն անքաննե՞տ ապի՛ն :

Պարտը որ իր պաշտօնին այնքան անտարբեր վերաբերուած է , արիւն քրտինք թափելով սիւնակներ կը լեցնէ , հայրենասիրական կոչերով պտուղտնեցողով ականջներ կը խլացնէ իր սիրական թերթիկին ի նպատակ : Անշուշտ այդ իրարանցողութիւն վիճակին պատճառը կայ :

Այ՛ն , կարելի էր սրտով մը կը անհնէ թէ Նոր-Օր ակնկալուած քաջալերութիւնը չ'գտներ :

Արդ եթէ երբէք սոյն թերթին գոյութիւնը վտանգուի , այն ատեն ինչպէ՞ս պիտի կրնայ առիթ ունենալ մեր այդ քաջալերուած հրապարակաւորը իր գրական տաղանգը փայլեցնել :

Բանգի Պարտը - ալ ինչո՞ւ ծածկենք - վէպիկ մը ունի սիւրբուհի՛ ապուռն ցողերով արվարձան շողերով խնկարայր՝ ոգեպարար սնով մը եւ ոսկեգոյն մեղանով գրուած :

Է՛ն , վէպիկը լոյս տեսնելու համար ո՞չ ապաքէն թերթի մը պէտքն ունի : Ահա գաղտնիքը իր « համետ անձնութեան » , նիւթուկան անհուն զոհողութեան » . . . : Մեղք որ վէպիկը գեղ լոյս չ' տեսաւ :

Գիտե՛մ , մօն շե՛ր , այս սողերը կարգալուր՝ սիրտը կարելի էր ու զանազակի՛ծ՝ սիրական

Մահախիթ գերեզմանին հողէն գլուխդ ցանկելով անոր իւրապարտը իրիխան հողած՝ պիտի նստիս ողբաս ընդդիմախօսներուն անզգամութեան ու ապերախտութեան վրայ . . . :

Ա՛ պօն անքաննե՞տ ապի՛ն . . . :
« ԴԻՏՈՂ ՄԸ »

ԲԱՅ ՆԱՍԱԿ

Աւու Ս . Բիւրատ

Ատենապետ Նախկին Գործ . Ժողովոյ

Լսարան - Ընթերցատուն Ընկերութեան

Աստ

Պատու ունինք պատասխանելու Ձեր Ձ սեպտեմբեր թուակիր նամակին :

Ընկերութեան տարեշրջանը լրացաւ Օգոստոս 1 ին . թէ՛ այս կէտը եւ թէ՛ տարեկան Ընդհ . Ժողովոյ գումարման հարկը նախորդ գիւնանին 27 յուլիս թուակիր գրութեամբ նախապէս ձեռքի ծանուցուած եւ Ընդհ . Ժողովոյ գումարումը սահմանուած էր օգոստոս 12 ին , օրակարգին իսկ որոշելով : Յիշեալ գրութեամբ ներփակեալ « Նոր մը » ի խմբագրութեան ուղղուած էր նաեւ զայս նստատող ազգարարութեան մը , բայց մեծ զարմազամբ տեսնուեցաւ « Նոր-Օր » ի մէջ փախտեալ յիշեալ ազգարարութեան մի ուրիշ ազգարարութիւնը Գործ . Ժողովոյ , որ ինքնաբերաբար եւ առանց զիւնանին հաւանութիւնը առնելու , տարեկան Ընդհ . Ժողովոյ իբր թուական կ'որոշէր օգոստոս 26 ը :

Գործադիր Ժողովոյ այս ընթացքը արդէն զեղծուած մ' է իր պարտուց մէջ :

Դիւանը անգամներուն միտքն աւելի չի պղտորելու եւ անհանձն տեսարաններու տեղի չ'տալու համար , խոհեմութիւն համարեց լուծութիւն պահել այս պարտագնացութեան առջեւ եւ Գործադիր Ժողովոյ տեղեկագրոյն եւ հաշուեկընթացին սպասեց մինչեւ օգոստոս 20 թուականը , յորում գիւնանը ըստ օրինի թէ՛ « Նոր Օր » ի եւ թէ՛ « Արշալոյս » ի զբից իր պաշտօնական յայտարարութիւնը , ըստ որում տարեկան Ընդհ . Ժողովը պիտի գումարուէր օգոստոս 26 ին : Յիշեալ յայտարարութիւնը կրկնուեցաւ նաեւ 24 ին , սակայն ցաւօք սրտի կ'ըսենք թէ ո՞չ մին եւ ո՞չ միւր չ'հրատարակուեցան « Նոր Օր » ի մէջ : Ձեզում մ'էր նաեւ սա . Օգոստոս 24 ին Գործ . Ժողովոյ կողմէն ստացուած նամակին մէջ կը յետաձգէիք Ընդհ . Ժողովոյ տարեկան գումարումը սեպտ . 9 ին իբր հետեւանք գիւնանին հետ համաձայնութեան մը : Դիւանը անմիջապէս պատասխանեց թէ՛ կ'ըրէք սեպտ . 9 ի խօսքը եղած չէ եւ փափկանկատութեամբ ձեր այդ յայտարարութիւնը ձեզի ներկայեց « իբր արդիւնք անուշագրութեան » , եւ պիտեց օգոստոս 26 ի թուականին վրայ : Ըստ այս որոշման տարեկան Ընդհ . Ժողովը գումարուեցաւ օգոստոս 26 ին եւ ընկերութեան անգամաց միաձայն հաւանութեամբ օրակարգը ընդունուելով ըստ հիմնական կանոնադրի տրամագրութեան՝ միամետ պաշտօնավարութեան պայմանագրով լրացած Գործ . Ժողովոյ տեղ նոր Գործ . Ժողով մը , եւ հրաժարեալ Մայր-Դիւանի տեղ , նոր Մայր Դիւան մը ընտրուեցաւ :

Յետ որոյ նորակազմ գիւնան 28 օգոստոս մի պաշտօնական նամակով խնդրեց ձեզմէ՛ իբր Ատենապետ Նախկին Գործ . Ժողովոյ ընկերութեան գոյքերը ու իրեղենները , միեւնոյն գրութեամբ ձեզի պայմանագրով տալով մինչեւ սեպտ . 10 , գիւնանի ներկայացնելու համար ձեր պաշտօնավարութեան տեղեկագրին ու հաշուեկընթաց « յետ որոյ , կ'ըսուէր , Ընդհ . Ժողով պիտի գումարուի անոնց ընթերցման եւ վաւերացման համար » : Գալով ձեր սեպտ . 2 թուակիր գրութեան՝ որով գիւնանէս կը խնդրէք « յառաջիկայ չորեքշաբթի օրուան Նոր-Օրի մէջ հրատարակուելու համար յայտարարել թէ՛ ներկայ ստույգ 9 ին կրակի օրը նոր բացուած Լսարան-Ընթերցատուն չէնքին մէջ տեղի պիտի ունենայ ընկերութեան տարեկան ընդհ . Ժողովոյ գումարումը » . Դիւանն բոլորովին անպատեհ կը դանէ ձեր այդ առաջարկը , քանի որ

ընկերութեան տարեկան ընդհ . Ժողովոյ գումարումը արդէն օգոստոս 26 ին օրինաւորապէս տեղի ունեցած է , եւ անգամաց ջուէարկութեամբ նոր ընտրութիւնները կատարուած են . հետեւապէս գիւնան այն ատեն կրնայ երկրորդ Ընդհ . Ժողով մը գումարել երբ ձեր կողմէն կը խրկուի միամետայ հաշուեկընթաց ու տեղեկագրեր :

Իսկ այն կրկնութիւնը զոր կ'ընէք սեպտ . 9 ի կարծեցեալ համաձայնութեան վրայ բացարձակապէս կը յայտարարենք թէ՛ Սիւնի է ձեր այդ առարկութիւնը :

Հաճեցէք , Տիւ՛ր , ընդունիլ մեր յարգալիբ բարեւները :

Ի դիմաց Մայր-Դիւանի Լսարան-Ընթերցատուն ընկերութեան :

Ա . Ատենապետ Ա . Ատենապետ
Ե . ԳԵՐԵՍԵՆՃԵԱՆ Ս . ՊԱԼԵԱՆ
Գահիրէ 4 սեպտ . 1900

ՀՈԳԵՎԱՆԳԻՍՏ

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ

Աղէքսանդրոյ Պատ . Թալ . Խորհրդոյ կողմէն ստույգ 2 ին հաղորդուած է մեզ իր վերջին նստին մէջ տուած որոշումն՝ որ է , յառաջիկայ կիրակի 9 Սեպտ . հանդիսաւոր Ս . Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն կատարել Ս . Պօղոս Պետրոս եկեղեցւոյն մէջ ի յիշատակ ազգային նշանաւոր բարերար Գրիգոր Զանչեանի :

Այս առիթու « Արշալոյս » ի Տնօրինութիւնը , նորակազմ Խմբագրութիւնը եւ բոլոր աշխատակիցները , գովելով Աղէքսանդրոյ ազգայնոց ԱՌ ՄԵՆ ԲԱՐԵՎՈՐՆԵՆ ցոյց տուած այս յարգանքներն , կը փութան ձայնակցել Աղէքսանդրոյ ազգայնոց եւ կ'օրհնեն յիշատակը հանգուցեալ ՄԵՆ ՈՐ ԲԱՅԵՐԻՆ , ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ :

ԱԶԴ

Լսարան-Ընթերցատան Գործ . Ժողովոյ հաւատարիմ ընկերութեան նպատակին կը փութայ ծանուցանել ազնիւ Ազգայնոց թէ՛ Լսարան-Ընթերցատունը բացած է այսօրուներէ իսկ՝ Պազար Մուրուրի մէջ յ'օգուցէքիէ : Իսկ բացման մասնաւոր հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի 9 . Սեպտ . կէս օրէ առաջ ժամը 10 ին նոյն ընթերցատան մէջ :

Արդ՝ Ընկերութիւնս կը հրաւիրէ ընթերցասէր հասարակութիւնը որ բարեհաճի պատուել սոյն հանդէսը իր համակիր ներկայութեամբ եւ քաջալերել Ընկերութիւնս իր բարենպատակ ձեռնարկին մէջ :

Ի դիմաց Գործ . Ժողովոյ Լսարան-Ընթերցատան .

Վ . Ատենապետ Ատենապետ
Ն . ԳԱՐԻԵԼԵԱՆ ՏՐ . Գ . ԷՎԼԻԱՆ
Գահիրէ . 4 սեպտ . 1900

Ընկերութեան Գործ . Ժողովոյ վերոյ յիշեալ յայտարարութիւնը կը հաստատենք :

Ա . Ատենապետ Մայր-Դիւանի
Ե . ԳԵՐԵՍԵՆՃԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս . Բեթրսպուրկ 31 Օգոստ . — Ռուսիա փանոյց Միացեալ-Նահանգներուն թէ՛ հիւ-

մայ որ դեպքաններն ազատեցան, ինք ետ պիտի քաշէ իր զօրքերը ու իր դեպքանը, մինչև որ իրական կառավարութիւն մը հաստատուի :

Միացեալ-Նահանգները հաւանութիւն տուին այս նպատակին, և այն պաշտօնը յայտնեցին թէ՛ Բէքինի մէջ գտնուող ջուկատապետերը համաձայնելու են միասին քաշուելու համար : Կը կարծուի որ Յրանսա յարած է այս մտքին :

Լոնտրա 31 Օգոստ. — Պօէրները նախաժողով երկաթուղին աւերելու յուսախաբութենէն ետքը ետ քաշուեցան : Պրֆալօ Ռիվերի միւս կողմը մեծ կորուստ տուին :

Սթրաթբօնա հեծեալը Վուօթրը Վալօնտրը հասաւ . կառախուսքը Մաշատօտօրֆ կը հասնի :

Լոնտրա 31 Օգոստ. — Կը ծանուցուի թէ 1500 Պօէրներ Գաօզլանի կ'սպառնան երկու թնդանօթներով : Ֆիքսպուրկի պահակաց թիւը աւելցաւ :

Լոնտրա . 31 Օգոստ. — Ժէնեբալ Պօթա Պօէրներուն հրամայեց իրենց Մաշեբները յանձնել կառավարական մասնախմբին սպասելով որ սա կարող ըլլայ նոր սալմամթերք հայթայթելու :

— Լոնտրա 1 Սեպտ. — Կրագիւրները կը պնդեն թէ պէտք է զօրագունները հանել Բէքինէն, և կը յայտարարեն թէ այս միջոցին բարոյական արգիւնքը ողբալի պիտի ըլլայ :

Ըստ Թալլի Բէքինի պարպուելուն ըստուգապէս կրկին պիտի յաջորդէ նախկին վարչութիւնը, և կը պնդէ որ մայրաքաղաքին գրաւումը շարունակուի : մինչև անգամ եթէ տէրութիւն մը գործակցութենէ դադրի :

Գերմանական մամուլը կը զարմանայ և կը կարծէ թէ Գերմանիա երբէք համախոհ չ'պիտի գտնուի այսպիսի գաղափարի մը :

Ռուսերը օգոստոս 29 ին Յի-Յի-Հարը գրաւեցին :

Լոնտրա 2 Սեպտ. — Ռուսերը Սոգոստ . 30 ին Հինկոթան գրաւեցին :

Տեսակցութեան մը միջոցին, որ տեղի ունեցաւ Ռիւթէրի գործակալութեան ներկայացուցչի մը և Չինաստանի Ամերիկեան գործակալին միջև, սա յայտարարեց որ եթէ երկնային Կայսրութիւնը յաջողի խզել տէրութիւններու համաձայնութիւնը, օտարականները պէտք է հեռանան Չինաստանէն :

Լոնտրա 1 Սեպտ. — Պօէրները իրենց մաւզէրի ռազմավթերը սպառած ըլլալով Մարթինի հրացանը կը գործածեն հիմայ : Մեծն Բրիտանիա 90000 ռուբլի վաստահատուցում կ'ընէ հարաւային Աֆրիկէի ծովափը բանած գերմանական նաւերուն համար :

Քարիզ 2 Սեպտ. — Պօէրները երկաթուղին աւերեցին Բլիբ Բիվրի կայարանը և կառախուսք մը այրեցին :

Ժէնեբալ Պրլլը կը յառաջանայ դէպի Լիւրնպուրկ :

Պօէրները կը համախմբուին Գրոգօտիլ Լեբան վրայ :

Լոնտրա 2 Սեպտ. — Մովակալ Ֆիշեր և Միլերկրականի նաւատորմէն 50 սպաներ պաշտօնապէս ներկայ գտնուեցան Սուլթանի յօրեկեանական հանդէսին : Լեմնօսի առջև խարխաւած նաւատորմը լուսավառեց :

— Կլասքօ 1 Սեպտ. — Ժանախախտի նոր դէպք մը :

Լոնտրա 3 սեպտ. — Շանկայի մէջ կը կարծուի թէ դրոյն Բական և զօրագուններուն պաշարի խնդիրներն են Ռուսական գունդերուն ետ կանչուելուն գլխաւոր պատճառն :

Լոնտրա 3 սեպտ. — Հաւանական է որ Մեծն Բրիտանիա կամ միւս տէրութիւնները ուղեգրի մը որոշեն իրենց համար, իրենց Բէքինի դեպքաններէն մանրամասն տեղեկագիրներ ստանալէն առաջ :

Լոնտրա 3 սեպտ. — Գերմանական զօրքեր ցամաք ելանի Վու-Սիւնկ, կարգապահութեան վերահաստատման մասին Անգլիացոց և Ֆրանսացոց օգնելու համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. Խաիլը այսօր Մարիութ պիտի մնայ իր կալուածներուն մէջ :

— Անգլիացի վաճառական մը՝ Պ. Լէվի՝ մեծաքանակ և զանազան ապրանքներով Սուտան կ'երթար Անգլօ-Եգիպտական պատերազմի միջոցին : յ' Աթպարա Ժէնեբալ Բիշնէր ապրանքները ցրուեց ասդին անգին և ամենը կորսուեցաւ : Պ. Լէվի դատ բացաւ Եգիպտական պատերազմական նախարարութեան դէմ, անկէ պահանջելով 4900 ռուբլի : Խաուն դատարանի նախադատատեանը իրաւունք տուաւ Պ. Լէվիի, բայց պատերազմական նախարարութիւնը կոչ ըրաւ յիշեալ վճռոյն դէմ :

— Ֆարչութի մէջ երիտասարդ տեղացի մը — անշուշտ քիչ մը փախուկ — պնդեց թէ կրնար կառախուսքէն աւելի շուտ վազել : Եւ երբ տեսաւ շոգեկառքը, սկսաւ վազել երկու երկաթագիծներուն մէջտեղէն . բայց շատ չ'անցած կորսնցոյց իր գրաւը, վրայ տալով նաև իր գլուխը, թիւերը և սրունքները :

— Մեր նախորդ թուով խօստացած էինք սկսիլ իբր թերթօն, մեր բարեկամներէն միոյն զրկած զաւելցողական գրութիւնը . սակայն տեղոյ անձկութեան պատճառաւ ստիպուեցանք յետաձգել զայն յստաջիկային :

— Յառաջիկայի պիտի հրատարակուի նաև Պօթօնի (Ամերիկա) մեր բարեկամներէն երիտասարդ գրագէտ Տ. Կ. Յ. Գարակիւլեանի մեզ զրկած երկու գրութիւններն . մին՝ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒՐԻՒՆՅՎԱՅ, որ կարևոր տեսութիւններ կը պարունակէ, իսկ միւսը՝ ամերիկեան կեանք « ԿԻՆԸ ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ վերնագրով, որ կարի հետաքրքրաշարժ և խնամեալ աշխատասիրութիւն մ'է :

Տիար Կ. Յ. Գարակիւլեան համակրելով « Արշալոյս » ի ռեզուլթեան, խօստացած է մնալուն աշխատակիցը ըլլալ անոր :

— Նոյնպէս Նիւ-Եօրքի մեր համակրներէն Տիար Ս. Կ. Ալիփուներեան զրկած է ընդարձակ յօդուած մը ինչձի՛ Բենե վերնագրով, որ իբր բանասիրական առաջիկայի պիտի հրատարակուի :

— Մերունի Տիար Ս. Ֆէլէկեանի ՍԱՍՈՒՆ ԵՒ ՉԷՅՈՒՆ ողբերգութեան վեցերորդ Ֆորման հրատարակուած է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԻ ՕՐՄԱՆԻ ԱՊՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ . — Հարկահաւաքներ որոնք Ֆիլիպէի մօտ Տէլի Օրմանի վիճակը գացած էին իրենց

պաշտօնը կատարելու համար, հրաձանաձգութեամբ ընդունուեցան գիւղացիներուն կողմէ : Երկու հարկահաւաքներ ծանրապէս վիրաւորուեցան, և անոնց ընկերացող զինուորները փախչելու պարտաւորուեցան կատարի ապստամբներուն առջևէն : Իսկոյն հետեակազօրքերու երկու գումարտակ խրկուեցաւ հոն . բան մը որ նշանն եղաւ ընդհանուր ապստամբութեան Ռուսական « Բիէնքի » հրացաններով զինուած գիւղացիներուն որոնք զօրքերու դէմ քաշեցին : Ըմբոստ գիւղին մօտ արիւնալի կռիւ մը տեղի ունեցաւ և շնորհիւ հասած օգնութեանց, ապստամբները ետ մղուեցան և իրենց բոլոր բանակատեղիները այրելէն ետքը՝ քաշուեցան բարձունքներու վրայ :

Երկու կողմէն ալ մեծ կորուստներ ունեցան մեռեալներու և վիրաւորեալներու : Ամբողջ գիւղը գրաւուած է հիմայ զինեալ զօրքերէն : Այն կողմերը ընդհանուր ապստամբութենէ մը կը վախցուի հարկերու պատճառաւ, որոց տակ գիւղացիները ընկճուած են :

ԵԱՆՔԻԱԿԱՆ ՌԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ . —

Եթէ կայ քաղաք մը բարոյականին աչալուրջ պահպան, գա պիտի ըլլայ՝ ըստ իր ոստիկանական կանոնագրի՝ Ռօսնօք քաղաքը, յ' Ամերիկա : Արդարև նոր որոշում մը կ'արգիլէ տասնըվեց տարեկանէն վար, երիտասարդներու և երիտասարդուհիներուն փողոց ելլել իրիկուան ժամը իննէն ետքը եթէ իրենց չ'են ընկերանար իրենց ծնողքը կամ « պատկառելի տարիքով և վիճակով » բարեկամներ, երկրորդ անգամ հետողը կը դատապարտուի 5 տուրա տուգանքի : Ռօմանօք քաղաքը կատակի չ'գար : Չմեռն ալ այն մատղաշ սերունդը իրեն տունը պիտի մնայ ժամն ութէն սկսեալ : Հետեաբար ոչ պարահանգէս և ոչ թատերական երեկոյթներ, բայց միայն հայրիկի կամ մայրիկի ընկերակցութեամբ :

Հիմայ, եթէ մտածենք որ նոր-Ալյսար-հի օրիորդները վարժուած են գիշեր ցերեկ պարտիլ՝ միս մինակ՝ ուր որ ուզեն, գիւրաւ կրնանք երեակայել մատաղաստի Ռօսնօքուհիներուն ողբն ու կոծը :

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ
(ԾՅԵՑՎՐԱԾ)

Գ. ՍԵՂՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ — Մաւսի Փողոց — ԳԱՀԻՐԷ

Ապրանքներուն լաւագոյնները ընտրած է և ամենէն գիւրամատչելի գներով կը վաճառէ :

ԳԻՄԵՑԷ՛Ք ԵՒ ՊԻՏԻ ՏԵՄԵ՛Ք .

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՂԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

4553	4103	7717	5486	7226	5356
773	1711	2843	8765	3313	173
4821	5463	5123	5138	7841	7822
7536	1577	6731	2801	7395	4682
2169	4268	5031	2042	8236	5287

ՀՐԱԺԵՇՏ

Տիրաբերական նախատարգման քաղաքէս մեկնելուն առթիւ կուգայ «Արշալոյս»-ի միջոցաւ իր հրատեղախոսքը սղոյնները մատուցանել իր մտաւոր և հեռաւոր բարեկամաց և համակրողաց, և մանաւանդ անոնց՝ որոնց հետ պատահութիւն չ'է ունեցած անձամբ տեսնուելու և իր հուսկ մընաք բարոյն ըսելու և անոնց բարեկամութեան քաղցր յիշատակը անջինջ կը պահէ իր սրտին մէջ:

ԱԶԳ

Հարան-Ղնկերցատուն ընկերութեան կողմէն մեր 104 թուով հրատարակուած «Կարևոր ազդ»-ին մէջ «Նախորդ» բառը սրխալումամբ ներմուծուած է: Հետևաբար պէտք է կարգաւ. «Յետ այսու Գործ. Ժողովոյ կային»:

ԳԱՖԵԵՓՐԱՏ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պայտիկ եւ Նուագածուաց խմբի Ջորանցիկն ձիշտ դիմացը

ՕՉԱՆՆԵՍ ՍԻՄՈՆԵԱՆ ԵՒ ԳԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԲՆԿ

Պատիւ ունին ծանուցանել Արգայ աղ-գայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մարմերը կազդուրելու համար, կրնան գիմել ԵՓՐԱՏ ՍՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով դարդարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով պատշաճագոյն վիճակի մը մէջ դըրած է:

ԳԱՖԵԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները. ընտիր և թարմ՝ օշարակներ, անխորդախ սուրճ և անխառն կաթ:

Մանաւոր խնամքով կը պատրաստուի նաև մրգաթան և չորմարակ (խոշաւ):

Հոն գիմոյ յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան:

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՆՏՈՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և չհեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղուներն, կրնան գիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆԻՆ:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՋԸ

Օտանկիէ դեղատանին դիմացի փողոցին մեջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցիբաւեր, Շրջաբերականներ, Գիտեր, Հրատարակներ, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կուտակագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտահոլութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒՆ ԵՆ:

—Մեր մրցակիցներուն արդէն մեզմէ առած դասերէն օգտուելը տեսնելով այս անգամ բոլորովին նոր բան մը սորվեցուցած ըլլալու գոհունակութիւնը վայելելու համար, ԱՐՇԱԼՈՅՍԻ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ»-ին վրայ երկու նոր ճիւղ ևս աւելցուցինք. այն է՝ ԳՐԱՏՈՒՆ, ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ: Հիմնաւ 1 Սեպտեմբեր 1900:

Ա. պոն անքանիստ ապիշ... Ու մեր կողմանէ կ'աւելցնենք հպարտօրէն:

Ընթողիւնակողներ, մեր հետեւեղու սովորախմբ. անքանի՛ գործարեցիք:

ՀԱՅ ՃԱՃԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԱՐԻ ԳԱՋԱՆՃԵԱՆ ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍՍՊԱՀ

Նեով — Իւնիսիստի Դեղատանին դիմացը

Որ և է կերակուր արտոժանամ և սընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համոզմամբ որ անդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր արտոժակին թշնամանանք կ'ընէ:

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին:

Գիներն ԴԻՒՍՄԱՏՉԵԼԻ ԵՆ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարձակները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատիրինց դուրմարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընտրութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԱՅՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրաւունքով:

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՊԻՃԵԱՆ

Ի Շարեա Գործ-Պէշ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղ աղքատ հիւանդներու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Մերունի Տիրա Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՀԻՆԳԵՐՈՐԴ Փօրման ալ հրատարակուած է:

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գիմել «Արշալոյս»-ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 6221, 4390, 5210, 405, 5480, 3020; 676, 8297, 5262, 5535, 6323, 7062; 5194, 6670, 4215, 1180, 3980, 539; 4110, 5935, 2457, 400, 6858, 8966; 4932, 8117, 7087

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՍԱՄԵԱՐՈՅԺ

Ապսիկ Շարա Գուպի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօսով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում, ամեն օր կէսօրէ կտք ժամը 3-5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԱՎԻՉՅԱՆԻ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա: